Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ութ Յ Ու Ն

ՀՀ Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

1. ՀՀ Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետը (ծածկագիր 3.1-2).

կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարականները.

աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հարկային և ոչ հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները.

պատասխանատվություն է կրում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար.

իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն.

-Հայաստանի Հանրապետության սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքների, աշխատակազմի կանոնադրության հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

-տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվության.

-ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2014 թվականի սեպտեմբերի 25-ին ժամը՝ 12-ին Լուսագյուղի գյուղապետարանի շենքում, հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ գ. Լուսագյուղ Ն. Դարբինյան 1 փկղ. 1 շենք:

Դիմող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները աշխատակազմ կամ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

-դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս).

-տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի, վկայականի, աշխատանքային գրքույկի պատճենները բնօրինակի հետ միասին:

-հայտարարություններ (ձևը լրացվում է փաստաղթղթերը լրացնելիս):

-արական սեռի անձինք զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճենները՝ իսկականի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք:

-մեկ լուսանկար 3x4 չափի.

-անձնագրի պատճենը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ ներկայացնելով անձնագիրը կամ անձը հաստատող փաստատղթերը:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10 ^{00}-ից - 17 ^{00} -ը բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2014 թվականի սեպտեմբերի 5-ը, Լուսագյուղի գյուղապետարան, հեռ. /095/ 44-00-55, /093/ 57-03-36, կամ Արմավիրի մարզպետարան, Աբովյանի փ. 71, հեռ. 0237-2-07-70:

Մրցույթին մասնակցել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Լուսագյուղի գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան՝ ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն, հասցեն ք. Արմավիր Աբովյան 71, հեռ. 0237- 2-07-70, 2-76-49: